Արձանագրություն N 3

ՀՀԲՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի տարածքում <<Եռասերունդ երկրապահ>> ուսումնամարզական համալիրի կառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12 հունիսի 2018թ.
ժամը 17:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Ադամյան /բացող/
Վ. Առաքելյան /գնահատող/
Գ. Գևորգյան /գնահատող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

Բացակայում էր
հանձնաժողովի անդամ՝ Ն. Մանուկյան /բացող/

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա.Քոչարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- Առաջին տեղ զբաղեցրած <<Երշին նախագիծ>> և <<Գողթն>> ՍՊԸ-ների կոնսորցիումի (այսուհետ՝ Կոնսորցիում) կողմից հրավերով սահմանված ժամկետում (05.05.2018թ) ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

- Փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- <<Երշին նախագիծ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված ԵՊՀ-ԲԸԱՀՇՁԲ-17/11 պայմանագրում բացակայում են N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները,

- <<Գողթն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված N ՔՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/32 պայմանագրի տուժանքի մասին համաձայնության տարեթիվը սխալ է նշված:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից 08.05.2018թ. ստացված տեղեկատվության համաձայն՝ <<Երշին նախագիծ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 373 426 (երեք հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր քսանվեց) ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա.Քոչարյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- Կոնսորցիումի հայտը մերժել, քանի որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով <<Երշին նախագիծ>> ՍՊԸ-ն ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

- Ծանուցել հաջորդաբար տեղ գբաղեցրած մասնակցին՝ <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

- Կոմիտե հարցում ներկայացնել <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Կոմիտե ներկայացված հարցման և <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա.Քոչարյան)

3.1 Կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

3.1.1 <<Մասնագիտական փորձառություն>> չափանիշի մասով՝

- բացակայում են ներկայացված N ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/2 պայմանագրի N 3 հավելվածը, N ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/8 պայմանագրի N 3 և N 3.1 հավելվածները, N ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15/08-6 պայմանագրի N 4 և N 4.1 հավելվածները.

- Ներկայացված <<SPAP II C-3.1.1.d>> պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հաստատված է միակողմանի՝ միայն Պատվիրատուի կողմից: Պայմանագրի ընդհանուր գինը 15 356 400 ՀՀ դրամ է, որի կատարման վերաբերյալ ներկայացվել են միայն 10 245 115.2 ՀՀ դրամի հաշիվ-ապրանքագրերը և այդ գումարի չափով պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Չեն ներկայացվել Պայմանագրի մնացած գումարի՝ 5 111 284.8 ՀՀ դրամի չափով հաշիվ-ապրանքագրերը և պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության) կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3.2.2 <<Աշխատանքային ռեսուրսներ>> չափանիշի մասով՝

- 5.2 հավելվածի <<որակավորումը>> սյունակի և մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ) տվյալները չեն համապատասխանում միմյանց,

- 5.2 հավելվածով ներկայացված <<<Հրաչյա Բաբյան>> մասնագետի վերաբերյալ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացված չեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների մասին

(Ա. Քոչարյան)

4.1 Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- ծանուցել <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

5. <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու (կամ չշտկելու) մասին

(Ա. Քոչարյան)

5.1 <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի կողմից չի ներկայացվել Պայմանագրի կատարման վերաբերյալ 5 111 284.8 ՀՀ դրամի մասով հաշիվ-ապրանքագրերը և Պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության) կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ հիմնավորելով, որ պայմանագիրը բաղկացած է 4 փուլից, որից 3-րդ և 4-րդ փուլերով սահմանված ծառայությունների բնույթը դուրս է ընթացակարգի շրջանակներից:

Մնացած անհամապատասխանությունները շտկվել և ներկայացվել են:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

6. <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանում ստանալու մասին

(Ա.Քոչարյան)

6.1 ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3 ծածկագրով գնման ընթացակարգին <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի կողմից ներկայացված Պայմանագիրը սահմանված կարգով գնահատելու նպատակով հանձնաժողովը որոշեց.

- Կասեցնել նիստը:
- Պարզաբանում ստանալու նպատակով համապատասխան գրությամբ դիմել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:
- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պարզաբանում ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

7. Ստացված պարզաբանման և <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա.Քոչարյան)

7.1 Հիմք ընդունելով Կարգի 61-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջները և ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց Պայմանագիրը գնահատել հրավերի պահանջներին չբավարարող, քանի որ.

- Չեն ներկայացվել Պայմանագիրը ողջ ծավալով կատարված լինելու հանգամանքը հավաստող հաշիվ-ապրանքագրերը և այն սահմանված ժամկետում կատարված լինելու հանգամանքը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության) կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի կողմից ներկայացված նմանատիպ հինգ պայմանագրերից ոչ մեկը չի բավարարում Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի պահանջին՝ այն է մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի կողմից ներկայացված պայմանագրերը գումարային արտահայտությամբ պակաս են տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից (<<SPAP II C-3.1.1.d>> պայմանագիրը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին չբավարարող):

7.2 Հիմք ընդունելով վերոգրյալները՝

- <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ի ներկայացրած հայտը մերժել:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից կազմակերպված ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Քոչարյան

Անդամ՝ ---------- Ռ. Ադամյան

---------- Վ. Առաքելյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան